

Թերթ կը ղրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Ամերիկա

2 Տղ. 30 սենդ


ԿԱՆԻՍԻԿ

ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIBAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE



ՇԱՐԱԹԱՂԱՆԴԵՍ . ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвог тѣ.

Ե. ՏԱՐԻ

ԴԵԿՏ. 15 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 234

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ

ԲԱՂԴԱԽԱՂ ՊԱՏԿԵՐ.

Յառաջիկայ կադանդին աթիւ մեր Ազնիւ Բաժա-
նորդաց պիտի նուիրենք բաղդախաղի զուարճալի պատ-
կեր մը: Սոյն մշտնջենական պատկերը որ երկսեռ ըն-
թերցողներու փափաքանցը յարմար 20 կարեւոր հար-
ցումներու անոնց 100 պատասխանները կը պարունա-
կէ. և որ շատ ցիւրիս կերպով կը գործածուի, ձեռքէ
ձեռք պտտցնելով չաղտոտելու կամ չպատուելու համար
եթէ ապակեայ շրջանակի մը մէջ առնուի, թէ՛ անեցի-
ներուն և թէ՛ այցելու հիւրերուն շատ անգամ անմեղ
և զուարճալի ժամանցներ պիտի կրնայ աթել:

2 հոբէ ալ պիտի վաճառի 20 սանդիմի:

Վաճառման կեդրոնատեղին պիտի ըլլայ Ա. Զարպ-
հանէլեան գրատունը: Հատ առնողներու համար 100ին
10 դեղ:

Պուրրէշէն	333	
Պոթուշանէն	200	
Թուլչայէն	160	50
Սուլօլաէն	127	50
Եաշէն	122	
Թէքուշէն	108	
Պապատաղէն	104	
Իօմանէն	95	
Կալացէն	68	
Պագօթէն	47	75
Պուլաթէն	52	
Ճսւրճօվաէն	27	
Բանչօէն	22	
	2529	05

Ընդհ. Ծախք 469 85

Հոստ գումար 2059 ֆր. ոսկի:

ԱԶԳԱՅԻՔ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Տեղւոյս Ազգ. վարժարանի շինութենէն
մնացած պարտուց բարձման ի նպաստ եղած
հանգանակութեան մասնակցած են հետեւեալ
քաղաքներու բարեսէր ազգայինք.

Յր. Սանդ.

Սուլինաէն	694	50
Իպրայիլէն	367	5

— Ի նպաստ Կարնոյ երկրաշարժէն արկածեալ-
ներուն, Բեթերսպուրկի Հայոց եկեղեցական խոր-
հուրդը 110 ոսկի ղրկեց է Կարնոյ առաջնորդա-
րանը:

— Խառն ժողովոյ որոշմամբ Աթէնքի, Կրէտէի
և ամբողջ Արշիպիղագոսի Հայերուն հոգեւոր հով-
ութիւնը յանձնուեր է Իզմիրի առաջնորդութեան.

— Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոսը Սիս եր-
թալուն առթիւ որոշեց է հետը քանի մը հատնոր
վարդապետներ տանիլ որոնք Կիլիկիոյ թեմերուն
համար պէտք պիտի ըլլան.

— Յառաջիկայ Մարտ 30-ին Ձմեռանիոյ մէջ պիտի կատարուի տեղւոյն Ս. Լուսաւորչեան ազգային Հիւանդանոցի հարիւրամեայ յոբելեանը, մասնակցութեամբ հայ և օտար մամուլի ներկայացուցիչներու և նմանօրինակ հաստատութեանց վարիչ մարմիններու, Այս պատճառաւ արդի հոգաբարձութիւնը յանձնաժողով մը կազմեր է հիւանդանոցին հարիւրամեակը «համազգային» հանդէսով մը տօնելու համար, վասն զի հիւանդանոցին մէջ միայն տառապեալ ազգայինք չեն որ պատսպարուած են, այլ օտարազգիք և այլակրօնք ևս :

— Հաւաստի աղբիւրէ կիմանանք (Ժէ Տ. Սարգիս Հայր Ղարիպեանի Պուքրէշի մէջ կատարած հանգանակութիւնն արդիւնաւորելու համար Պրնյք. Գ. Նազաչեան, Յ. Փափազեան, Լ. Ավճրեան և Գ. Վասպուրանցիի աշակցութիւնները դնահատելի և շնորհակալութեան արժանի են եղեր :



ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՔԱՇԽՈՒԹԻՒՆ

Դարձեալ Ռուսահայերն են որ իրենց վրայ ներքոյներ հիւսել կու տան և գովութեանց պըսակներ բոլորել՝ իրենց գլխուն շուրջը: «Լուսայ» (1901, Գիրք Բ. էջ 479) շնորհաւորելով հայ գրագէտները՝ գրականութեան դիւրութիւնն ընծայող նոր նպաստի մը համար, կը ծանուցանէ հասարակութեան, թէ Պ. Աւետիս Դուկասեան, որ իւր զանազան բարեգործութիւններովը ծանօթ է, և իւր ծախքով կառուցեր է ի Տիգրիս, «եկեղեցական-պատմական թանգարանի համար մի շինութիւն, զրաւոր յայտնել էր ազգիս Վեհ. Կաթողիկոսին հաստատեալ մի մնայուն վարչութիւն թանգարանի համար» որուն պիտի յանձնէ կտակով քանի մը բարենպաստակ ու կարեւոր կարգադրութիւններ: «Այդ կարգադրութիւններէն մէկն էլ այն է», կըսէ Պ. Դուկասեան իւր պաշտօնական յայտարարութեան մէջ. «որ կտակիս մէջ նշանակել եմ Տաւն հսկար ռուքի իբրեւանձեռնմխելի գումար, որի տոկոսիքն իւրաքանչիւր տարի պիտի յատկացուի Հայերէն լատագոյն երկասիրութեանց իբրեւ մրցանակ: Կտակս պիտի կատարուի իմ մահէն յետոյ, Արդ՝ ցանկալով իմ կառուցած թանգարանիս բացումը նշանակուել որ և է արժանայիշատակ գործով, ես որոշեցի կտակէս այդ կէտի կատարումը սկսել նոյն

իսկ այժմէնից և տարէց տարի 500 ռուբլի ներկայացնելով վարչութեան այդ նպատակով»:

Կեցցէ՛ Պր. Դուկասեանն, որ իւր դրուատելի գործնականովը՝ ճամբայ կը հորդէ այլոց՝ կենդանութեան ժամանակն իսկ վայելելու կտակին յառաջ բերած արդեանց ուրախութիւնը:

Հ. Ամսորեայ

«ՀՈՒԳՈՒԳԻՆ ՀԱՄԱՐ»

Պրն. Թապալաքեար Թոյոս Փոլատեան.

Թուրք գրականութենէն բոլորովին անտեղեակ մէկը (մինչեւ անգամ պարզ կարդալու գրելը չգիտցող) կրնայ այդ լեզուին թարգմանն ու ստուգաբանը հանդիսանալ: «Տէվէյէ քազազլըգ» կըսէ առաւել: Դուք ո՞ր, առանկ լեզուաբանական խնդիրներու կամ ձեր հասկացածը լեզուով՝ առանկ խմորեղէններու խառնուրդը ո՞ր:

Կեղծ ստորագրութեամբ և կամ ձեզի պէս միամիտներու ստորագրութեամբ հրատարակուած պաշտպանողականներուն միեւնոյն գրչի արտագրութիւններ ըլլալուն լաւ համոզուած ենք ու կըսենք թէ անոնց մօտան անցած է, գէթ մեզի համար: Չանցնիր:

Հետեւաբար, գործիքի (մարդամեքենայ) մը հետ չենք զիջանիւր վիճաբանելու:

Գալով յետ գրութեան մէջ ակնարկուած «խմբագրական»ին, խօսքերնիս զձեզ գործիք ընողին ուղղելով կըսենք թէ «Հայելիի ընթերցողք գիտեն որ առանկ խմբագրական մը կամ պարբերութիւն մը հրատարակած չենք երբէք ու պատրաստ ենք 5 տարուան հաւաքածոն փափաքողաց տրամագրութեան տակ քննել, իր անպատկառ ստախոս մը ըլլալը հաստատելու համար:

Հետեւեալը կը հրատարակենք յանուն անկողմնակալութեան:

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Իմ հարցապնդողներուս

Կոյր՝ կուտակցականներուն համար գողեր և պահակներ են ըսած եմ, քանի մը կուտակցամուներ այս նկատմամբ տրտունջներ յայտնած են: Ուրեմն հարկ կը համարիմ հրապարակ դնել մէկ նմոյշը. երկու յայտնի բերանացի խոստովանող գաւազիրներն Լևոն Սարգիսեան և Վահան Շահ-

րիման. Վահան Շահրիմանը պահված է Հնչակ-
եան կեդրոնի մէջ, իսկ Լեւոն Սարգիսեանի ար-
տաքսման համար հակառակ ժողովրդի կողմանէ
եղած կրկնակի խնդրանքին, ցաւ ի սիրտ կըսենք
թէ մինչեւ այսօրս Ազգ. դպրոցի շէմէն ներս
քանի մը կուսակցամոլ հոգաբարձուներու հովա-
նաւորութեանը ներքեւ պահված է.

Գողեր և պահակներ չըսենք, հապա ի՞նչ
ըսենք.

Այս անգամ այսչափ.

Կը խնդրեմ Տիար Խմբագիր, որ անփոփոխ
հրատարակէք.

ՊԱՂՏԱՍԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Վառնա 14 դեկտ. 1901

Յ. Գ. Մէկ օրինակ ալ «Իրաւունք»-ի ղըր-
կուած է.

Նոյն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր

Ազգագրութեան լրագրոյդ 233րդ թիւոյն մէջ առ-
իս աշխարհելի յօդուած մը հրատարակուած
էր տիկին Պ. Ֆասուլեանեանի ստորագրութեամբ.
Ներկայ գրութեամբս կուգամ պարզել որ, ես
երբէք Արեւելեան խմբի տնօրէնը չեմ եղած,
այլ իրենց հաւանութեամբ առաջնորդ մը, ես
զիրենք ամսականով կամ ռոճիկով չեմ վարձած,
այլ չափու ընկերակցութեամբ կազմուած էր Ա-
րեւելեան խումբը. Արդ՝ ի՞նչպէս զիրենք լքած և
երեսի վրայ առանց դրամի ձգելով հրաժարած
կըլլամ, քանի որ բոլոր խմբականք կլորիկ գու-
մար մը կը պարտին ինծի. և երբ հասոյթը ծախ-
քին չբաւէր, միթէ՞ կարելի էր շարունակել ներ-
կայացումները, և եթէ կարելի էր. ինչո՞ւ ինք-
նահաւան տիկինը իր նոր աստղ (Սարկապուրկա)
խումբը ցրուեց ի Բաղրաճըզ, այն ատեն ալ
միևնոյն մարդիկն էին խումբը կազմողները եւ
Յակոբեան մը չկար հոն.

Բաց ասկից, ինչպէ՞ս կարելի էր կառավա-
րել խումբ մը ուր անհամաձայնութիւն և վէճ
սկսած էին տիրապետել, որուն առաջին պատ-
ճառը տիկինը նոյն ինքն էր, վասն զի, ազնը-
ւափայլ տիկինը իր ճժամեայ տարիքին հակա-
ռակ միշտ կուզէ երիտասարդուհիի դեր ստանձ-
նել, բան մը որ թէ դերակոտտարաց և թէ հան-
դիսատես ժողովուրդին արդարացի գիտողու-
թեանցը տեղի կուտայ.

Մնամ յարգանք

Գ. ՅԱԿՈԲԵԱՆ,

ՏԻՊԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՄԸ

(Իրողութիւն)

Անցեալ օր կարծեցեալ հայրենասէր մը
Թաշեօլին Հայ ճաշարան մը կը մտնէ ուր իրեն
ժանօթ մէկ քանի դաւառացի ազգայինք կը ճա-
շէին.

— Բարեւ ձեզ.

— Աստուծոյ բարին, հրամայեցէք.

— Տղա՛ք, հոս ինչո՞ւ նստեր էք.

— Ձե՛ս տեսներ, կը ճաշենք.

— Աղէկ, բայց հայրենիքի մէջ մարդ կ'ու-
զեն, ինչո՞ւ հոն չէք երթար.

— Էյ դու՛ն ինչո՞ւ չես երթար. միթէ հայ-
րենիքը մինակ մերի՞նն է, քուկդ ալ չէ՞ մի.

— Այո՛, բայց ես չեմ կրնար երթալ.

— Եւ ինչո՞ւ.

— Որովհետեւ հոս կարեւոր գործ ունիմ.

— Կրնա՞նք իմանալ թէ ի՞նչ է այդ կարեւոր
ըսած գործդ.

— Եղբայր, ես առնելիք տալիք ունիմ
Մուսալլան հայ պիտի ծախեմ.

Բո՛ւ. — (Ականջը խօսի շուկուգի հայագէտ,
տաճկագէտ, համայնագէտ և խմորագէտ պա՛ռն
փաստաբանին).

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Վաղը կ'երակէ ցորեկէ վերջ ժամ Յու կէսին
«Վէսէլօ» Հայ դերո. խմբին կողմէ հայերէն լեզ-
ուաւ պիտի ներկայացուի «Արշակ Բ.» 5 արամ
ողբերգութիւնը.

Դեկտեմբեր 18 երեքշաբթի գիշեր մեծաւ
պատրաստութեամբ Վէսէլօ Հայ դերասանական
խմբին կողմէ առաջին անգամ ըլլալով պիտի
ներկայացուի հռչակաւոր Շէքսպիրի «Օթէլլօ»
5 արարուած ողբերգութիւնը.

Յառաջիկայ նոր տարւոյ առթիւ ամեն
տեսակ Օրացոյցեր, թէ պատի և թէ գրպանի
եկած ըլլալով, կը ծախուին Ա. Չարպհանէլեան
գրատունը.

“ԱՌ ՏԱՍՆՈՅԴ”

Ընդհանրապէս երբ թշուառի մը ձեռք կարկառենք, առ համոզումը ունինք թէ ինկած մարդու մը հետ է գործերնիս, ինկած՝ նիւթապէս թէ բարոյապէս:

Չէ՛, կը սխալինք մեծապէս. Հարստութեան բարձունքէն, չքեղ պալատներէն աղքատութեան գոգն իյնող խեղճ մուրացիկը, շատ ունգամ աղնիւ սիրտ մը, վեհ զգացում մը կը կրէ իր կուրծքին տակ:

Դրամի պակասութիւնը՝ բարոյական յատկութիւններէ զուրկ ըլլալ չենթադրէր. Իրաւ, հացի խնդիրը մարդ կը ստիպէ երբեմն նետուիլ, թաղուիլ մոլութեանց, աղտեղութեանց ժահրին մէջ, ձգել ինչ որ ազնիւ է, կոխտուել ինչ որ բարի է, բայց և այնպէս ամէն աղքատ պէտք չէ լուալ մէկ ջուրով, որովհետեւ անոնց մէջ շատեր կան, որոնք կարող են բարի դասեր, խրատներ տալ մեզի:

Անցեալները՝ ունեւոր մը իբրեւ ողորմութիւն 10 փԱՐԱ տուաւ աղքատի մը. Այլ խօսք չթողուց սակայն. ծաղրեց, հայհոյեց, ամէն գէշութեանց տէրն ալ ըրաւ անիկա. Երանի՛ թէ չտար ու այդ խօսքն ալ չարտասաներ. Չէի կարծիր թէ մարդու մը՝ որուն յանցանքը աղքատութիւնն է եղեր պարզապէս, այդ օրինակ լուտանքներ կ'արձակուին:

Արցունքի երկու խոշոր կաթիլներ նայնծափայն մուրացիկին աչքերէն վար կը գլորէին պսպղուն, ու ցնցուեցաւ. Արցունքին մէկ կալալ կը ճարտասանութիւն մըն է ինքնին:

Մուրացիկը այդ երկաթի պէս պաղ ու սեքարի պէս կարծր խօսքերը չէր մարսած, ազնիւ էր ան, ու անձնական արժանապատուութիւնը վերաւորուած կը զգար:

— Ա՛ռ տասնոցդ, գոչեց ընդհուպ:

Ու տեսայ որ զուարթութեան նշով մը աչքերուն մէջ կը շողար. Վրէժ լուծեց թշուառը:

«Ա՛ռ տասնոցդ», ի՛նչ պարզ, ալ ի՛նչ վեհ խօսք. Երանի կուտամ հի հա աղքատին, զոր շատ հարուստ, շատ մեծ գտայ այդ պառուտած ըզգեստներուն մէջ փաթթուած. քան այն որ օրն ի բուն ոսկիներու հետ կը խաղայ ու բրտութիւնը ողորմութեան հետ կը խառնէ. թերեւ ծաղրագին նկատելով:

«Ա՛ռ տասնոցդ», միշտ կը հնչէ ականջիս ու միշտ ստորնացած կը նկատեմ ան, որ աղքատէն իր տասնոցը վերոտացաւ:

Մերի:

ՏԻՊԱՐ ԿԱՌԱՊԱՆ ՄԸ

Անգլիական թերթ մը կը պատմէ հետեւեալ հետաքրքարժ պատմութիւնը, որուն վաւերականութիւնը կերպնաւորէ:

Անցեալ աշնան, անգլիացի հարուստ դրամատէր սըր Տրակս Դրիկթընի նաւահանգստին մէջ ոպատոյ իւր զբօսանաւն երթալու համա՝ վարձու կառք մը կը նստի:

— Հոս ինձի սպասեցէք, կըսէ կառապանի:

Ու ինք նաւ կերթայ:

Փորձի համար պտոյտ մըն էր ընելիքը բայց զբօսանաւը այնքան լաւ կընթանար որ, իբրեւ ճշմարտապէս արտակարգ անգլիացի, սըր Տրակս խելոյն կորոշէ աշխարհի շրջանը կատարել:

Այդ միջոցին ի՛նչ կընէր կառապանը Դրիկթընի ծովափին վրայ:

Կ'սպասէր:

Հետեւեալ օրը և յաջորդ օրերը տեղէն չերըաց:

Մինակ, արտօնութիւն խնդրեց և ստացաւ շինելու տեսակ մը սալատոյն, ուր պատուպարուեցաւ ինքն ու իր ձին:

Տարին անցաւ:

Կառապանը կապրէր հոն, դրանք սեմին վրայ ծխափայտը քաշելով, ու խարազանը ձեռքը. Դալով ձիուն, կենդանին միշտ լծուած, ըզգտապէս կը գիրնար:

Առտու մը, նաւահանգստին պոհակը ծանուց սըր Ուիլքըմ Տրակսի զբօսանաւն ժամանումը, որ, աշխարհի շրջանը կատարելէ յետոյ, Անգլիա կը դառնար:

Ջբօւաշրջիլը նաւահանգստի ոտք կոխելուն առաջին դէմն ելլով մարդն եղաւ իր կառապանը:

Չայն տեսած առեւը բնաւ զարմանք չը յայտնեց:

— Օ՛յ ուայր՝ ըսաւ, ի՛նչ է պարտքս:

Կառապանը ներկայացուց հաշիւը մանրամասնօրէն գրուած, որ կը հասնէր տասնեկինգ հազար ֆրանքի:

Սըր Ուիլքըմ Տրակս, առանց յօնքերը պատկերելու, դրպանէն չէքի տետր մը հանեց, պահանջուած գումարը նշանակեց անոնցմէ մէկուն վրայ և կառապանին երկնցուց:

— Հիմակ, ըսաւ, ապսրանքս տարէք զիս:

Կառքը հեծաւ և երբ տուն հասնելով կը պտորատուէր հեռանալ, կառապանը կեցուց զայն:

— Հիմակուան վարձքս, անիկա գրուած չէր այն հաշիւին մէջ զոր վճարեցիք:

— Շիտակ է:

Եւ անգլիացին երկու շիլին և տուաւ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԾԱՌԱՆԵՐԸ

Տան մը ծառայ յարմարցնելը շատ դժուար է, ինչպէս գիտենք, բայց ծառաներն են որ միշտ թերութիւն կ'ունենան Տէրերը ընդհանրապէս կուզեն որ ծառաները իրենց բնաւորութեանը համակերպին, «քանի որ կը վճարենք կոր» կըսեն, Բայց երկու կողմէ ալ թերութիւն կայ, Ծառաները «տգիտութեամբ» եւ տէրերը քիթիզութեամբ իրարու դժուարաւ կը յարմարին, Ասյո՛ւ հանդերձ կան խելացի տէրեր որ աչք կը դոցեն, իրենց ծառաներնուն թերութեանը, Փոխադարձաբար կան «տըռտըռ» տիկիներ ալ որ շիտակը քաշուելիք բաներ չեն (թոսքը մէջներնիս), Համեստ ծառաները լեզունին կարճ կը բռնեն—ինչ որ միշտ աղէկ բան է—, իսկ գոռոզները, պապուս քապուճիկ չափ լեզունին կը զկնցնեն—ինչ որ դործի գալիք բան չէ, Աւելորդ է հոս յիշել թէ խելացի, կարող եւ ուսեալ մէկը... տան սպասաւոր չըլլա՞ր, հետեւաբար տէրերը մարդասիրաբար պէտք է վարուին ամէն պարագայի մէջ:

Սպասաւորներուն մէջ, ուղորդաբար պարզ ծառային «աղբար» անունը կուտան, խոհարարը, «վարպետ» կը կանչեն, (բաւական է որ աղը շատկէկ չփախցնէ), Սպասուհին ընդհանրապէս «Մարիամ» է «տատան», աւելի յարգ ունի տանը մէջ, իսկ ամենէն սոսկալին... «սիւտանան» է որ կուգայ պարզապէս տունիդ տիկինը կըլլայ, Այն մայրերը որ իրենց զաւակին կաթ տալու կարողութիւնը (կամ բարի կամեցողութիւնը) չունին, ստնտուին գերի կըլլան բառին բռն նշանակութեամբը, պարտաւոր են անոր հրամարձել համեղ կերակուրներ, ընտիր պտուղներ, պատուական գինի... որպէս զի կաթը ուժով ըլլայ, Այս ամէն զոհողութիւնները յանձն կառնենք, զաւակներնուս «խաթերն» համար, որպէս զի երբ անոնք մոճնան, եթէ մանչ է, օտարը գայ ձեռքերնուս յափշտակէ, իսկ եթէ աղջիկ է, «թուախոմայ» տանք որ գան առնեն, Ի՛նչ ծիծաղելի իրականութիւն:

Սպասաւորներուն մէջ զուարճասէրներ ալ կը գտնուին, կծծի տէր մը շատ անգամ ծառայ կը փոխէր, նոր ծառայ մը իրեն կը ներկայանայ հետը ռակարկելու համար:

—Աղա, սպասաւոր մը ուզեր էք, անոր համար եկայ:

—Շատ աղէկ, Ի՛նչ ընել գիտե՞ս:

—Քիչ շատ ամէն բան ձեռքէս կուգայ, բաւական է որ զոհացուցիչ կերպով վարձատրուիմ:

—Իմ սովորութիւնս, օղլում, ամիսը 10 ֆըրանք կուտամ:

—Շատ քիչ է, բայց Ի՛նչ պիտի ըլլայ Իմ աշխատութիւնս:

—Մեծ բան մը չկայ ընելիք արդէն, առտուն կանուխ կելլաս մէյ մը վերէն վար կաւլես, անկէ կերթաս կը հանգստանաս, Յետոյ ցորեկուան ճաշը կը պատրաստես, ու վերջը կերթաս նորէն կը հանգստանաս, Մենք կերակուրնիս կուտենք, դուն ալ պուրաշթիս կ'ուտաս ու վերջը կերթաս նորէն կը հանգստանաս, յետոյ կելլաս տմբողջ պարտէզը կը ջրես ու...

—Կերթամ նորէն կը հանգստանամ:

—Հապա՛, ետքը կելլաս իրիկուան ճաշը կեփես ու կերթաս նորէն կը հանգստանաս:

—Քեզի բան մը բսե՞մ, աղա...

—Ի՛նչ:

—Ես այդչափ հանգստութեան չեմ գար, կելլամ լիթթիլս կըլլամ ետքը:

Ծառաներուն տխմարը ընդհանրապէս զըւարճալի կըլլայ:

Տան մը մէջ գիշերային այցելութեան մը կը ոպասէին, Անուշադրութեամբ բակը դըտնըւած կանթեղը կիյնայ կը կոտրի, Ժամանակն ալ ուշ էր նոր մը գնելու համար, Տանուտէրը միջոց մը կը խորհէր, որպէս զի բակը լուսաւորուի, Կինը կը յիշեցնէ թէ քովի դռացին չինի կանթեղ մը ունէր, անշուշտ կրնայ իրենց փոխ տալ այդ գիշերուան համար, արդէն քէյիլթաիզ էին, Ամուսինը գիտել կուտայ թէ այդ չինի կանթեղը բան մը չէր, բայց կինը կը պնդէ, ուստի ամուսինը ծառան կանչելով կըսէ:


—Մարտիրոս չուտ քովի Յակոբ աղանց գնա, ու օա «չինի կանթեղը» ուղէ, առ բեր:

Քիչ մը վերջը ծառան կուգայ ձեռքը զրեխ մը բռնած, զոր տէրոջը ներկայացնելով կըսէ:

—Աղա, ահա «չիրիկան» ամա, ըսին քի Ի՛նչ «գեղ» է ուղածնին, բարեւ ըրին, հարցուցին քի ո՞վ է հիւանդը:

—...:

Պատկեր:



Նիհար ամսականով զուարթամիտ գրագետ մը, մէկուն ունեցած իր պարտքը տակաւին կարող եղած չէր վճարելու. Վերջերս իր պարտապահանջին կը հանդպի որ յանդիմանութեամբ կըլէ իրեն.

—Պէ՛տք ունիմ, սա պարտքդ ե՛րբ պիտի տա՞մ.

—Աս ամիս բան մ'ալ չեմ կրնար վճարել.

—Ճշտիւ միկնոյն պատասխանն է որ տուիր անցեալ ամիս.

—(Ժպտելով) Է՛հ, կը տեսնես որ խօսքս ալ բռնեցի.

Մեղաւոր անձ մը իր «Ֆիլիզլի» մեղքերը խոստովանելու կ'երթայ. Քահանան լրջութեամբ մտիկ ընելէ յետոյ՝ երբ «արձակում» տալու կ'ելլէ, մեղաւորը ընդմիջելով.

—Տէ՛ր հայր—կ'ըսէ—, մեղք մըն ալ գործած եմ՝ բայց չեմ համարձակիր ըսելու.

—Ըսէ՛ զաւակս, մի քաշուիր.

—(Վարանելով) . . . Ի՛նչպէս ըսեմ.

—(Քաղցրութեամբ) Ի՞նչ, մէկու մը ապտակ զարկիր.

—(Բերանացի սուլելով) . . . Հիւիւիւիւթ, այդ ալ բա՞ն մըն է.

—(Զարմանօք) Մարդու մը պատուոյն դըպչեցար.

—(Միշտ սուլելով) . . . Հիւիւիւիւթ, այդ ալ բա՞ն մըն է. . .

—(Ապշելով) . . . Կարեւոր բա՞ն մը գողցար.

—(Սուլելով) . . . Հիւիւիւիւթ,

—(Աչքերը բանալով) . . . Տո՛ւն այրեցիր.

—(Սուլելով) . . . Հիւիւիւիւթ,

—(Ժպտելով) Հասկցայ. . . (Թէ օրհնելով և թէ սուլելով) . . . հիւհիւհիւհիւհիւհիւհիւհիւհիւհիւթ. . . ասանկ մեղքին ասանկ «արձակում» հատէ գնայ բանդ.

Երկու դատարկագորտներ իրարու կը հանդպին.

—Բարեւ, սիրելի արհեստակից.

Աստու բարին, աշխիւ բարեկամ.

—Ի՞նչ լուր.

—Աղէկութիւն.

—Գործերը ընտոր են.

—Բայց դիտեցածիդ պէս, ամենեւին չի կայ.

—Ո՛րքան ատենէ ի վեր անգործ ես.

—Տարիքս կ'ուղես գիտնալ.

Յօդադատիս համար ի՞նչ կը պատուիրէք որ առնեմ, հարցուց հիւանդ մը իր բժշկին.

—Համբերութիւն, պատասխանեց էսքիւլապը.

ՃԵՌԱԳԻՐ

Աժառնս Բոժոժիկ եւ Ընկ.

Լոնտոն

Ստոր մատնութեան շիտակ ճամբան ցուցընող տաճկագէտ Վ. Շահրիմանը լսելով որ Վառնա բնակող իր հաւատարիմը Թ. Թ. Փ. տաճկագէտութիւն քաւալակիջ կընէ, խնդալէն ճաթեցաւ.

Քամչաթքա

Ազգ. վարժարանի մանկապարտէզի Բ. բաժանումին մանկապարտիկ պանուհի կարգեցաւ օրիորդ մը՝ որ մանկապարտիկ պանուհիութիւնը պիտի ուղրի. . . աշակերտներէն.

Նոյն

Հրապարակային կռիւներէն ճանճրացո՞ւ կարգ մը աղգայինք՝ չորս ժամ վիճաբանելէ ու ջուրը հալանը դրած ծեծելէ ետքը՝ որոշեցին երկու իմբագիրները դատելու համար ընկերային ատեան մը կազմել. . . օդին մէջ.

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (41)

ՌԵՆԵ ՏՐ ՔՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԾԱՐ-ՄԱՐԾԱՐԵ)

—Մեզի հետ պիտի գաք։

—Անշուշտ։ Չեղ և Մենկ նախադասը տեսնելու եկած էի։ Անշուշտ իր ամարանոցն է. հիմակ հոն կը վազեմ։ Ետքէն բոլորովին ձերն եմ, որքան ալ համոզուած ըլլամ ձեր սխալի մասին։

—Սիրելի Բերբինս, եթէ մինակ ըլլալի, պէտք չունիմ ձեզ ըսելու թէ աւելի հանդարտ պիտի ըլլայի, բայց սիրուն կենակցուհի մը ունիմ որ անձնուիրութիւնն ըրած է հոս ապրելու իմ բովոյս Բանցաւոր եմ այս զոհողութիւնն ընդունելուս, վասն զի քանդոնի մէջ երուպացի կիներուն բնակութիւնն արդիւղ օրէնքը չընթուեցաւ։ Իբրեւ թողտուութիւն արածուած է տիկին Լութերի ներկայութիւնը գործակալատան մէջ. Ուրեմն ամենափցուն պատուակ մը պէտք է՝ ամենամեծ տաղտուկներ պատճառելու համար մեզի։

—Իրաւունք ունիք, Մենկին կերթամ. Դուք այն միջոցին աղէկ մը որոշեցէք ձեր բոլոր կարգադրութիւնները՝ վաղը արշալոյսէն առաջ կարենալ անհետանալու համար։

Այս ըսելէն ետքը նաւապետը իր յարկն ելաւ Բէյ—Հօն տունելու համար, յետոյ իր մակոյկը գնաց և Հօնան կղզին ուղղուեցաւ։

Նաւահանգիստէն անցած պահուն նշմարեց որ մեծ ոգևորութիւն մը կը տիրեր հոն և վախցաւ որ Պ. Լութեր շատ ճիշդ գուշակած չըլլայ միտքերուն ընդհանուր վիճակը, վասն զի թուեցաւ իրեն թէ իր մակոյկը որուն նաւազները հնդիկ էին, տեղ տեղ մը մոռնալով ու ամենագէշ մակդիրներով կ'ընդունուէին։

Բայց Բերբինս այնքան քիչ բանի համար յուսահատող մարդ չէր։ Հանդարտօրէն շարունակեց իր ճամբան և իսկոյն հասաւ փոքր նաւամատոյցը զոր Մենկ շինել տուած էր ամարանոցին առջեւ։

Մանտարէնը՝ որ իր ամարանոցն էր, գրկաբաց ընդունեց զայն։ Մինակ, որովհետեւ փոխարքան դեռ իր դիտումներն հաղորդած չէր իրեն, պէտք եղածին պէս չկրցաւ գոհ ընել նաւապետը, բայց հաւաստեց որ քոնկ իշխանը աղէկ աչքով կը դիտէր մտադրուած

արշաւանքը, և աւելցուց թէ՛ ըստ իրեն՝ Հոնկ քոնկի կառավարիչը աւելի երկար ատեն պիտի չսպասէր, վասն զի Չին կառավարութիւնն ի ներքուստ շատ ուրախ պիտի ըլլար եթէ ծովահեններուն ձեռքէն աշատելու ծառայութիւնը մատուցանէին իրեն։

Իրաւ է որ մեծարոյ նախագահն եղեանդատ տունին՝ այնքան շահ ունէր Լատրոնի վրայ ըլլալիք յարձակումէն որ իր կարծիքը չէր կրնար կողմնակցութեամբ մը արտաւարել։ Խորին սոսկումով կը տեսնէր թէ ութըն օր կար իր առջեւ։

Բերբինս, աւելի հանդարտ, բոլորովին իր կարծիքէն չէր, բայց իր Բրիտանական հպարտութիւնը թողտուութեան սպասել իր անհատական գործերն ընելու համար։ Ուստի Մենկ դիւրաւ համոզեց զայն։

—Սակայն, ըսաւ իր բարեկամին, զոր մինչև մակոյկն առաջնորդած էր, որովհետեւ մեր արշաւանքը ամենէն կանուխ քառսունըութը ժամէն առաջ չկրնար տեղի ունենալ, յատուկ մարդ մը զրկեցէք ինծի եթէ նոր բան իմանանք, թէ իշխանին կողմէ և թէ այն վրոյցի մասին որ կը շրջէր ապստամբներուն մերձեցումին վրայ։

—Աստահ եղէք։ Որչափ կը ցաւիմ հետեւինդ չըգալուս։ Դժբախտաբար, այժմու պարագաներուն մէջ, պարտաւոր եմ չհեռանալ քանդոնէ։ Պաշտօնիս պարտականութիւնները վար կը դնեն զիս։ Օ՛հ, ապա թէ ոչ, ես անձամբ կուգայի...

Բայց անվեհեր դատաւորը յանկարծ կեցաւ իր մարտական հաւատքին բարոզութեանը մէջ զոր պիտի պարզէր անշուշտ։

Նաւապետին մակոյկին յետնակողին վրայ ճանչցած էր իր Հոնկ-քոնկի կախալը, որ հեգնատ երեւոյթով իրեն կը նայէր, և այս բան յանկարծ իր միտքին մէջ արթնցուցած էր բոլոր յաջորդական ապշութիւնները որոց ենթարկուած էր։

—Այո, ճիշդ ինքն է, ըսաւ Բերբինս բրբիջով մը տեսնելով դատաւորին ու դատապարտելին փոխադարձ ճանչընութիւնը։ Նորէն աշխարհք եկած մարդ մը հէ՛, ի՞նչ կ'սրէք։

—Անո՛ւր, առասպելական, կը մըմտար Մենկ՝ բազուկները երկինք վերցնելով Ս՛հ, եթէ Չոն ողջ կամ մեռած ձեռքս չյանձնէք, պատճառը սա պիտի ըլլայ որ ամենեւին սէր ունեցած պիտի ըլլաք վրաս։

—Գիտէք որ ընդհակառակն է։ Չորս հինգ օրէն, Լատրոն կղզիները մեր այցը պիտի ընդունին։ Եթե քանդոնի մէջ ուշագրաւ բան մը տեղի ունենայ, անպատճառ իմաց տուէք ինծի։

Այս խօսքերն ըսելով Էֆրէնի հրամատարը բարե-

կամական ուղղոյն մը ուղղեց տարաբաղդ մանտարէնին և մակոյկ նստաւ :

Քսանը հինգ վայրկեան ետքը գործակալատուն դարձած էր :

Երկու ցնցոտիազգեաց մուրացկաններ, գարշելի երեւոթով, վանդակափեղկին կրթնած էին : Անոնց առջինէն անցան տառնց ուշադրութիւն ընելու, բայց այդ մարդիկը ճանչցան վանոնք, վառն զի մէկը ցած ձայնով ըսաւ միւսին .

— Ապահով ես որ Բերքինս նաւապետն է :

— Ապահով եմ, պատասխանեց միւսը . կը ճանչնամ Էփէնի բոլոր նաւապետը, որոց երկրորդ նաւապետը Մորթոնն իր պետին չափ վառնաւոր է : Այս վերջինը վաղը անշուշտ իր լսարեկամներուն պիտի հետեւի :

— Կը մեկնի՞ն ուրեմն :

— Պ . Լոթէր իր գահաւորակիրներուն ստակը վըճարելով ծամբեց զանոնք :

— Ուրեմն ասկից չչարժինք :

Այս միջոցին, անմեղ դատապարտեալներուն պաշտպանը Պ . Լոթէրին կը միանար :

Սա իմացուցած էր իր կնոջը որ մասամբ հանգած էր իր ամուսնին երկիւղը ու իր պատրաստութիւնները կը վերջացունէր :

Մաքսախոյսը քիչ մը սիրտ տուաւ անոր՝ ըսելով թէ իրենց պիտի ընկերանար, եւ ամենքն ալ առանձնացան բանի մը ժամ հանգստանալու համար :

Յաջորդ ատուն, Էփէնի հրամաւարն էր որ մեկնուի նշանը տուաւ :

Տիկին Լոթէր էրիկմարդու գղեցտներ հագած էր . Բերքինս թեւն առած էր զայն : Բէյ-Հօ բովերնուն կը բալէր : Պ . Լոթէր ետեւէն կուգար իր ծառային հետ, հուժկու մալայիցի մը որուն վրայ կատարեալ վստահութիւն ունէր :

Այս կարգով անցան գործակալատան վանդակազընէն : Շրջականները բոլորովին ամառի էին և նաւապետը բաւական զարմացաւ տեսնելով որ երկու մուրացկաններ կը մօտենային ողորմութիւն խնդրելու :

Չեռուրնուն աղատելու համար բանի մը փարա տուաւ, բայց չափազանց շնորհակալութիւններ ուղղելու պատրուակով, որոց սովոր էին չինացիք, մուրացիկներն ընդհակառակը մինչեւ մաքսատան բարափն անոնց հետեւեցան, ուր մակոյկը կը սպասէր :

Այդ բարափն հասած ատենին Պ . Լոթէր սոսկումի ճշմարիտ շարժում մը ունեցաւ :

Մանտարէնի նաւ մը խարսխուած էր հոն . փախստականները պարտաւոր էին անցնիլ անոր նաւազնե-

րուն առջեւէն որը վառօդ փոխադրելու զբաղած էին, եթէ Չինացի սպաններէն մէկը ճանչնար տիկին Լոթէրը, կացութիւնը կրնար շատ ծանրնալ : Բարեբախտաբար, բան մը չեղաւ : Տիրող կէս մութին շնորհիւ, մանկամարդ կինը խուսափեցաւ վտանգաւոր քննութենէ մը որ կը սպառնար իրեն, անարգել մակոյկ նստան, և թեւեւ կի տառն հարուածներ գետին մէջտեղը տարին զայն :

Ներկայ գտնուելէ յետոյ այս մեկնումին, մուրացիկներէն մէկը վազելով ուղղուեցաւ դէպ ի արուարձանները :

Բերքինսի մակոյկը երկար նաւ մըն էր ութը թիւափարներով և յետնակողով վրանով մը որուն տակ ինկած էր տիկին Լոթէր գրեթէ նուազուն . Հրամանատարը ղէկին անցաւ, ուղղուեցաւ դէպի Կուկ կղզին, հեռու կենտրոնով նաւահանգիստէն դուրս ելլող ձկնորսներէն, և շատ չանցած մտաւ Մաքսօի անցքը, քիչ մարդաշատ տեղերէն Վաւթօս հասնելու համար :

(Շար.)

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻԻՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ Ֆգրալար վէ Հիքեայէլէր . Մալիւմաթը Ֆէննիյէ . Լուլաթը Լէթայիֆ . Ֆէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմի Պիլմէճէլէր :

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշը օլունան մէղքիւր քիթապըն պիրինճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիլլոտէ սոթլմագտա աըր ֆիյ 2 ֆրանք :

Մ . 2

ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ

Սրտաշարժ բանաստեղծութեանց յանգաւոր սոյն փոքրիկ փնջիկը որ 32 էջերէ կը բաղկանայ, արժանի է բանասիրաց ընթերցմանը :

Գին 20 սանդիմ : Հատ առնողներու համար գոհացուցիչ գեղջ :

Կեդրոնատեղին է մեր խմբագրատունը :

Печатница "Взаимность" — Варна